«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

ԱՌԱՐԿԱ՝ ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ, ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆԱՀԻՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՄԱՐԶ՝ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԳԵՂԱԴԻՐԻ ՌԱՖԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն----------3

Գրական ակնարկ----------5

Գործնական համատեքստ----------13

Հետազոտության ընթացք----------14

Դասի պլան 1----------14

Դասի պլան 2----------19

Դասի պլան 3----------21

Տվյալների մշակում և վերլուծություն---------26

Դաս 1-ի վերլուծություն----------26

Դաս 2-ի վերլուծություն----------27

Դասի 3- ի վերլուծություն----------28

Եզրակացություն----------31

Գրականության ցանկ----------32

Ասա՛ ինձ, և ես կմոռանամ,
Ցո՛ւյց տուր ինձ, և ես կհիշեմ,
Տո՛ւր ինքս անեմ, և ես կհասկանամ:
Կոնֆուցիոս

Ներածություն

Թեմայի արդիականությունը

Արդի կրթական համակարգում դասվարին ներկայացվող պահանջները բավական բարդ և բազմաբնույթ են կախված ինֆորմացիոն մեծ հոսքից: Ժամանակակից հասարակության զարգացման միտումները պահանջում են ուսումնական միջավայրի կազմակերպման նոր մոտեցումներ: Հաջողության հասնելու համար արդեն բավական չեն միայն ակադեմիական գիտելիքները և մածողական կարողությունները: Անհրաժեշտ են որոշակի բարեփոխումներ և նորամուծություններ: Շատ հաճախ տարրական դասարանում սովորող աշակերտները դժվարանում են միմյանց հետ համագործակցել, քննարկել այս կամ այն երևույթը: Չեն գիտակցում, որ միասին աշխատելով ավելի արագ և համեմատաբար հեշտ կլինի առաջադրանքի կատարումը:

Ուսուցչից մեծ ջանքեր են պահանջվում, որպեսզի նա կարողանա յուրաքանչյուր երեխայի ներգրավել դասապրոցեսի մեջ, զարգացնել նրանց կարողությունները, հմտությունները և, ինչ խոսք, հետաքրքրությունների շրջանակը:

Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետության: Հենց այդ պատճառով էլ համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքները ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան՝ համագործակցային:

Թեմայի նպատակը և խնդիրները

Հետազոտությանս գլխավոր նպատակն է տարրական դասարանում սովորողների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը: Այս նպատակն իրականացնելու համար պետք է լուծել հետևյալ խնդիրները:

1. Օգնել սովորողին գիտակցել համագործակցության արդյունավետությունը:
2. Զարգացնել միմյանց օգնելու հմտությունը
3. Սովորողին հնարավորություն տալ համագործակցելու և գնահատելու համագործակցության հզորությունը:
4. Տեղեկատվության մշակում, փոխանակում, լսելու, հարցեր տալու, խմբակիցների գաղափարների ամփոփում, ցածրաձայն խոսելու կարողությունների զարգացում:
5. Զարգացնել միասնականությունը և հանդուրժողականությունը:

Կրտսեր դպրոցականների մեջ համագործակցելու կարողության ձևավորումը ուսումնառության գործընթացը կդարձնի առավել գրավիչ և հետաքրքիր նպաստելով սովորողների համար հավասար մասնակցության հնարավորությունների ստեղծմանը: Սա թույլ կտա ուսուցչին լուծելու ավանդական մեթոդներով գրեթե անլուծելի թվացող՝ բոլոր սովորողների ակտիվ մասնակցության ապահովման հարցը: Համագործակցելու կարողության շնորհիվ սովորողները համատեղ ջանքերով կարող են լուծել բարդ խնդիրներ: Դասարանը կդառնա ընդհանուր նպատակ ունեցող անհատների փոքր խմբերի մի թիմ, որտեղ հեշտությամբ կարելի է լուծել բոլոր խնդիրները:

Գրական ակնարկ

Աշխատանքը նպատակ է հետապնդում նպաստել կրթության որակի, սովորողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացն ակտիվ ու հետաքրքիր դարձնելուն, համագործակցային խմբերով աշխատելուն:[1]

Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը, ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս:[9]

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը:

Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում:[1]

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»:[3]

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային

աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում:[4]

Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:[7]

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են <<Աշակերտների թիմային առաջադիմություն>>, <<Խճանկար>>, <<Շրջվիր դեպի զույգդ>>, <<Պրիզմա>>, <<Շրջագայություն պատկերասրահում>>, <<Երեք բանալի և մեկ կողպեք>> և այլն:[7]

Քննարկենք համագործակցային մի քանի մեթոդներ:

1. **Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ.** Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում:Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտներին, և՛ խմբերին:
2. **Խճանկար (Ջիգսո)**

   Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի օրինակ է աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը (կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում

ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն): Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը:

3. **Շրջվիր դեպի զույգդ**

Այս մեթոդը հնարավորություն է տալիս խուսափել դասաժամին ավելորդ աղմուկից, տեղաշարժից և խառնաշփոթից: Աշխատանքային դիրքը լինում է՝ «աչք աչքի», «երես երեսի»: Դեմ առ դեմ գտնվողները կարողանում են հեշտությամբ տեսնել և լսել մեկը մյուսին: Հաղորդակցումը կատարվում է խոսքով, աչքերով: Նման անհատական պատասխանատվությունը ավելի զգոն է դարձնում զույգին, և աշակերտներն ավելի լրջությամբ են մոտենում առաջադրանքին և ստուգում միմյանց՝ համոզվելու համար, թե արդյո՞ք երկուսն էլ պատրաստ են պատասխանելու, թե ոչ: Այս ժամանակ աշխատանքային աղմուկը կառավարելի է, իսկ աշխատանքային խմբերը չեն խանգարում իրար:

4. **Պրիզմա**

Մեթոդը կիրառվում է դասի սկզբնական, խթանման փուլում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ազատ ու անկաշկանդ մտածել որևէ թեմայի շուրջ: Մեթոդը արդյունավետ է կարճ, համառոտ բառերի, հատկանիշների թվարկման ժամանակ: Մեթոդի կիրառումը ապահովում է ակտիվություն, աշխուժություն, ֆիզիկական շարժունակություն, թարմություն և հետաքրքրություն:

5. **Շրջագայություն պատկերասրահում**

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո,

համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

6. **Երեք բանալի և մեկ կողպեք**

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:[8]

Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:[6]

Ուսուցիչը միանգամից, մի դասի ժամանակ չի կարող օգտագործել մեթոդների հարուստ զինանոցը: Նա պետք է որոշակի դասի համար կատարի ուսուցման մեթոդի, հնարի ընտրություն: Ուսուցման մեթոդի հիմքում ընկած են այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ կամ դասի որոշակի փուլում. բացի դասի նպատակից ու խնդիրներից, մեթոդների ընտրությունը կախված է նաև՝

- դասի տիպից ու կառուցվածքից,
- ուսումնական նյութի բովանդակությունից,
- աշակերտների տարիքից,
- դասարանում աշակերտների թվաքանակից,
- պատրաստվածության մակարդակից,
- շահագրգռվածությունից ու հետաքրքրությունից,
- ուսումնադիտողական պարագաների առկայությունից ,
- ժամաքանակից,

- ուսուցչի պատրաստվածության մակարդակից և այլ գործոններից:[2]

Համագործակցային ուսուցման տարրերը կարևոր են դասը ճիշտ պլանավորելու և խմբային աշխատանքը կազմակերպելու համար: Յուրաքանչյուր դասին կիրառվող համագործակցային աշխատանքը պետք է նպատակ ունենա զարգացնելու և ձևավորելու սովորողի համատեղ աշխատելու ունակությունը:



Գծապատկեր 1. Համագործակցային ուսուցման տարրերը [8]

Համագործակցային աշխատանքի առավելությունները: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել: Համագործակցային ուսուցման մեջ էական են ոչ միայն ակադեմիական գիտելիքներ և հմտություններ սովորելը, այլև կարևոր է խմբային զարգացման մշակման միջոցով դառնալ հմուտ համագործակցողներ (համագործակցային հմտություններ) և գիտելիքների

ակտիվ կիրառողներ (մտածողության հմտություններ): Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու:[4]

Համագործակցելու կարողության ձևավորումը շատ կարևոր է նաև նրա համար, որ ուսումնական գործընթացը ավելի արդյունավետ կդառնա:

Այսինքն՝ անհրաժեշտ է սովորեցնել սովորել:

<<Սովորեցնողը սովորում է կրկնակի>> Սենեկա

Համագործակցությունը նպաստում է նաև սովորողի սոցիալականացմանը, անձնական որոշ բարդություններից ազատվելուն և հանդուրժողականությանը: Այս աշխատանքի ժամանակ աշակերտը ոչ միայն սովորում է, այլ սովորեցնում:

Փոքր խմբերով աշխատելու առավելությունները: Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է խմբերի մեծությունը: Առավել արդյունավետ են համարվում 4-5 հոգուց բաղկացած խմբերը: Այդպիսի խմբերում աշակերտները առավել մեծ ակտիվություն դրսևորելու հնարավորություն ունեն:[2]

Փոքր խմբերով ուսուցումը ունի հետևյալ նպատակները

- ձևավորում է հաղորդակցման հմտություն,
- աշակերտները սովորում են միմյանցից,
- միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում,
- խթանում է թիմային աշխատանքը,
- զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը,
- քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների համոզմունքները,
- ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:[8]

«Ուրիշների հետ աշխատելու և համագործակցային ստեղծագործական աշխատանքից առավելագույնս օգուտ քաղելու էական պայմաններից մեկն

ուրիշի տեղում իրեն պատկերացնելու կարողությունն է, քանի որ դիմացինի տեսակետի ըմբռնումն աշակերտներին հնարավորություն է տալիս ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի պահանջներին»:[5]

Ուսուցչի դերը համագործակցային ուսուցման մեջ: Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով:[1]

Ուսուցիչն առաջնորդում է դասարանը՝ ստեղծելով փոխադարձ վստահություն և համագործակցությանը խթանող միջավայր: Ուսուցիչը հրամայողից վերափոխվում է հրահանգչի, աջակցողի և դիտարկողի:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում
- սովորողների խմբերի ձևավորում
- սովորողների տեղաբաշխում
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում
- գնահատում:

Համագործակցային ուսուցման հիմնական սկզբունքները

Տարբերում ենք համագործակցային ուսուցման չորս հիմնական սկզբունքներ: Դրանք են՝

ա) Զուգահեռաբար տեղի ունեցող շփումներ՝ ուսման գործընթացում աշակերտների միջև տեղի են ունենում բազում շփումներ: Այսպիսով, յուրաքանչյուր անհատ աշակերտի ակտիվ մասնակցության տևողությունը շատ ավելի երկար է, քան այն կլիներ ավանդական եղանակով ուսուցման դեպքում:

բ) Անձնական պատասխանատվություն՝ աշակերտներից յուրաքանչյուրը պետք է ավարտի աշխատանքի իր բաժինը՝ խմբի աշխատանքում ներդրում կատարելու համար: Յուրաքանչյուր աշակերտ իր աշխատանքի մասին զեկուցում է խմբին: Դասընկերները գիտեն խմբում ներգրավված յուրաքանչյուր աշակերտի ներդրման մասին, և յուրաքանչյուր անձ պատասխանատու է առաջադրանքի կոնկրետ մասի համար:

գ) Կառուցողական փոխկախվածություն՝ անհատական զարգացումն ու խմբի զարգացումը դրականորեն փոխազդում են միմյանց, եթե աշակերտի զարգացման համար պահանջվում է դասընկերների զարգացումը, և եթե խմբի հաջողությունը միաժամանակ նշանակում է նաև մեկ այլ խմբի հաջողություն:

դ) Հավասարաչափ մասնակցություն՝ աշակերտները մասնակցում են աշխատանքին ըստ իրենց ընդունակությունների: Այս նպատակին հնարավոր է հասնել աշխատանքի ճիշտ բաշխման և առաջադրանքներ հանձնարարելու միջոցով:[9]

Գործնական համատեքստ

Հետազոտական աշխատանքս իրականացրել եմ Արագածոտնի մարզի Ռաֆիկ Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոցում (աշխատում եմ այդ դպրոցում):

Փորձարարական դասերի համար ընտրել եմ 1-4-րդ դասարանները:

Հետազոտության ընթացք

Դասի պլան 1

Համագործակցային մեթոդի կիրառմամբ

Առարկա – ¦Մաթեմատիկա§

Դասարան – 2-րդ

Ուսուցիչ – Անահիտ Նավասարդյան

Դասի թեմա - ¦Տվյալների հավաքումը հարցումների միջոցով և ներկայացումն աղյուսակների միջոցով§

Դասի նպատակը՝

1. *Ներմուծել և մշակել տվյալների հավաքումը հարցումների միջոցով և այդ տվյալների աղյուսակային ներկայացումը*
2. *Ձևավորել տեղեկատվությունն աղյուսակի միջոցով ներկայացնելու գործնական կարողությունը*
3. *Աշակերտների տրամաբանական դատողություններ կատարելու կարողության ձևավորում*
4. *Երկրաչափական պատկերների հետ աշխատելու կարողություն և հմտություն:*

Խնդիրները՝

1. *Զարգացնել աշակերտների մանր մոտորիկան աղյուսակներ ստեղծելու գործում*

2. *Տվյալների հավաքում և գրառում*
3. *Զարգացնել երկրաչափական գիտելիքները և կիրառել դրանք(գծել քառակուսի, կառուցել աղյուսակ, տարբերակել կետը, գիծը, հատվածը):*

Դասի ընթացքը՝

ա) Կազմակերպչական մաս - հաճախումների հաշվառում, տնայինների ստուգում:

բ) Բանավոր հաշիվ - Կատարել շղթա - հաշիվ

գ) Խթանում

Աշակերտներին բաժանում եմ քարտեր, որոնք ունեն այսպիսի տեսք:

	Կենդանիների անունները
1.	
2.	
3.	
4.	
5.	
6.	
7.	
8.	
9.	

Առաջարկում եմ ինքնուրույն լրացնել աղյուսակը ըստ 54 էջի 3-րդ առաջադրանքի (նկարում պատկերված կենդանիների անունները գրել այբբենական կարգով):

Աշխատանքի կատարման ժամանակ չեմ միջամտում սովորողների աշխատանքին, միայն հետևում եմ, թե ովքեր են ճիշտ կատարում:

Հարց - Այժմ եկեք տեսնենք, թե ովքեր են ճիշտ կատարել առաջադրանքը:

Ստուգում եմ բոլորի աշխատանքները, բայց ուղղումներ չեմ կատարում: Այնուհետև գրատախտակին աշակերտները գրում են ճիշտ հերթականությամբ (հարկ եղած դեպքում ուղղորդում եմ):
Աշակերտները ինքնուրույն ստուգում են իրենց աշխատանքը և անում համապատասխան ուղղումներ:
Բացատրում եմ, որ այբբենական կարգով դասավորությունը ճանաչված է ամբողջ աշխարհում և կոչվում է լեզվագրական համարակալում: Հորդորում եմ հիշել և միշտ կիրառել:

Այնուհետև առաջարկում եմ միասին կազմել աղյուսակ, մեր դասարանի աշակերտների անունները լրացնել լեզվագրական համարակալման եղանակով:

Անուն	Սիրած կենդանի	Սիրած գույն
Ալիկ	Շուն	Կապույտ

Գրում ենք անունները ըստ այբբենական կարգի, այնուհետև դասարանը բաժանում եմ 2 խմբի և հանձնարարում տվյալների հավաքում:
1-ին խումբ կանխագուշակել և գրել մյուս խմբի անդամների սիրած գույնը և կենդանին (պարզելու համար որքանով են ճանաչում համադասարանցիներին):
2-րդ խումբ գրել իրենց սիրած կենդանու անունը և գույնը:

Համեմատում ենք 2 խմբերի տվյալները, միասին լրացնում գրատախտակի աղյուսակը:

Աշխատանքը կատարել գունավոր կպչուն թղթերով և փակցնել համապատասխան վանդակում:

Հարց - Ի՞նչ կատարեցինք:

Պատասխան - Լրացրեցինք աղյուսակներ:

Հարց – Ինչի՞ հիման վրա լրացրեցինք աղյուսակները:

Պատասխան - Ձանազան տվյալների:

Հարց - Ինչպե՞ս կանվանենք այսօրվա դաս:

Պատասխան - Տվյալների ներկայացումն աղյուսակով:

Դասարանը բաժանել 3 խմբի՝ *<<Աշակերտների թիմային առաջադիմություն>>* մեթոդով: Տալիս եմ առաջադրանք. կազմել աղյուսակներ նշված երկրաչափական պատկերների անվանումները:



I.Խումբ- գրել այբենական կարգով

II.Խումբ - գրել ըստ վանկերի քանակի

III.Խումբ - գրել ըստ տառերի քանակի

Ստուգել խմբերի աշխատանքները և գնահատումը կատարել *¦Գնահատման անիմ§* մեթոդով, հաշվի առնելով թիմում յուրաքանչյուրի կատարած աշխատանքը:

Հանձնարարել տնային աշխատանք. կազմել աղյուսակ և լրացնել տան անդամների անունները և տարիքը:
Ժամը 16:00-ին միանալ և խաղալ անցածի ամրապնդման նպատակով իմ կազմած թեստ-խաղը:

https://quizizz.com/join?gc=58431633

Դասի պլան 2

Համագործակցային մեթոդի կիրառմամբ

Առարկա - ¦Ես և շրջակա աշխարհը§

Դասարանը – 2-րդ

Ուսուցիչ – Անահիտ Նավասարդյան

Թեմա - ¦Ի՞նչ է մեզ շրջապատում§

Դասի պլանը ներկայացնում եմ wisemapping ՏՀՏ գործիքով:

https://app.wisemapping.com/c/maps/1228941/public

Քանի որ, իմ նպատակն է համագործակցելու կարողության ձևավորումը, կշռադատման փուլում կատարվող աշխատանքը ներկայացնում եմ <<Շրջագայություն պատկերասրահում>> մեթոդով:

Դասարանի կենտրոնում դրված ստեղանի վրա գտնվում են կենդանի և անկենդան բնության տարրերի նկարներ:
Դասարանը բաժանում եմ երկու խմբի 4-5 հոգանոց:
1-ին խմբին հանձնարարում եմ սեղանից վերցնել անկենդան բնության տարրերի նկարները, իսկ մյուս խմբին՝ կենդանի բնության:
Առաջարկում եմ ընդհանուր ստեղանից յուրաքանչյուր խմբից մեկ անդամ մոտենա և վերցնի խմբի առաջադրանքին համապատասխան մեկ նկար: Այսպես մինչև նկարների ավարտը:
Աշխատանքը պետք է կատարվի հետևյալ սկզբունքով.
1/ Խմբի յուրաքանչյուր մասնակից պետք է մասնակցի քննարկմանը և հետագայում կարողանա պատասխանել ուսուցչի հարցերին:
2/ Յուրաքանչյուր խումբ իրավունք ունի մեկ սխալի ուղղման:

Խմբերին տալ ժամանակ աշխատելու և քննարկելու. ինչո՞ւ վերցրեցին այդ նկարը, այդ նկարի բառով կազմել բառակապակցություն:
Ստուգում - Ստուգումը կատարում եմ լուսացույցի հնարով:
Տալիս եմ հարցը և այն աշակերտի անունը, ով պետք է պատասխանի հարցին:
ա) Եթե պատասխանը լիարժեք է, ցույց եմ տալիս կանաչ շրջանակը
բ) Եթե թերի է և լրացման կարիք ունի՝ դեղին շրջանակը
գ) Եթե սխալ է՝ կարմիր շրջանակը:

Դասի պլան 3

Համագործակցային մեթոդի կիրառմամբ

Առարկա - ¦Մայրենի§

Դասարան – 2-րդ

Ուսուցիչ – Անահիտ Նավասարդյան

Դասի թեմա - ¦Կապույտ տերևներ§

Դասի նպատակը -

- ★ Զարգացնել երկխոսությունը
- ★ Արտահայտիչ ընթերցելու կարողությունների ձևավորում
- ★ Ձևավորել տեքստի շուրջ քննարկում ծավալելու հմտություն
- ★ Բառապաշարի հարստացում

Խնդիրները -

- ❖ Կիմանա զգույշ, սեղմել, խնդրել, տերև բառերի ուղղագրությունը
- ❖ Կկարողանա վերարտադրել տեքստը
- ❖ Կնկարագրի հերոսներին, նրանց վարքագիծը
- ❖ Կզարգանա արարքների և դրդապատճառների գնահատման կարողությունը

Ակնկալվող արդյունքը -

- ➢ Տիրապետել սահուն կարդալու տեխնիկային
- ➢ Արժեհամակարգի ձևավորում
- ➢ Ընկերոջն օգնելու պատրաստակամություն

Դասի ընթացքը -

Կազմակերպչական մաս

Քայլ 1 *Խթանում*

Այս փուլում կիրառում եմ <<Խճանկար>> համագործակցային մեթոդը՝ նպատակ ունենալով աշակերտների միմյանց հետ համագործակցելու, քննարկում կատարելու և ընդհանուր եզրահանգման գալու կարողության զարգացմանը: Դասը բաժանում եմ երեք տրամաբանական մասերի: Դասարանը ևս բաժանում եմ երեք խմբի (3-4 հոգի):

Յուրաքանչյուր խմբին հանձնարարում եմ լուռ կարդալ իրենց հանձնարարված հատվածը, այնուհետև խմբով քննարկել հերոսների արարքներն ու վարքագիծը: Կազմել հարց մյուս խմբերին առաջադրելու համար (նպատակ ունենալով խմբերի լսելու կարողության ստուգումը):

Քայլ 2 *Նոր նյութի ներկայացում*

Ամբողջական դասը խմբերը կներկայացնեն միմյանց շարունակելով, կտան հարցեր, կստանան պատասխաններ:

Այնուհետև դասը կամփոփեմ նպատակային հարցերով.

- Ինչո՞ւ Սոնան լուռ հեռացավ:
- Ինչո՞ւ Անին կարմրեց:
- Ինչո՞ւ ուսուցչուհին նման խոսքերով դիմեց Անիին:
- Գնահատե՛ք Անիի արարքը:

Քայլ 3 *Ուղղորդված աշխատանք*

Աշակերտները կվերարտադրեն սովորած ամբողջական տեքստը: Հարկ եղած դեպքում կմիջամտեմ և կուղղորդեմ ճիշտ ընկալելուն և վերլուծություն կատարելուն:

Պատմելուն զուգընթաց դուրս կգրենք ուղղագրական դժվարություն ունեցող բառերը և կկազմենք բառակապակցություններ: Օրինակ՝ տերև - աշնան տերև:

<u>Քայլ 4</u> *Կշռադատում*

Այս փուլում աշակերտներին կհանձնարարեմ կպչուն թղթերի վրա գրել Անիին և Սոնային բնութագրող, հատկանիշ ցույց տվող բառեր:

Գրատախտակին կկազմենք Վեննի դիագրամը



Վեննի դիագրամի լրացումից հետո քննարկում ենք և վեր հանում մարդկային այն արժեքները, որոնք կօգնեն մեզ ավելի լավը դառնալու և հասարակության կողմից ընդունված և գնահատված լինելուն:

Կգտնենք հերոսների ընդհանրությունը բնութագրող բառերը և կկազմենք նախադասություններ: Տեքստից դուրս կգրենք -ուհի վերջածանց ունեցող բառերը, կկազմենք նոր բառեր:

<u>Քայլ 5</u> *Դասի ավարտ*

Աշակերտների ստեղծագործական միտքը զարգացնելու և արժեհամակարգը ձևավորելու նպատակով կհանձնարարեմ շարունակել և ավարտել

պատմությունը իրենց ուզած վերջաբանով: Դասը կներկայացնենք դերային խաղով՝ Անի, Սոնա, ուսուցիչ, հեղինակ:

Կխրախուսեմ և կգնահատեմ աշակերտներին:

Դասը հանձնարարել սահուն և արտահայտիչ կարդալ գրել առաջադրանք 3-ը:

Սովորածը ամրապնդելու համար խաղալ ՏՀՏ գործիքով իմ կազմած արմատ + ածանց խաղը:

https://learningapps.org/display?v=pi19ecv6n21

Տվյալների մշակում և վերլուծություն

Դաս 1-ի վերլուծություն

Մաթեմատիկա

Այս դասի կշռադատման փուլում կիրառեցի համագործակցային մեթոդներից մեկը, նպատակ ունենալով խմբում ներգրավել և՛ թույլ սովորող աշակերտներին, և՛ լավ սովորող աշակերտներին, որպեսզի կարողանան միմյանց հետ համագործակցել և հասնել ցանկալի արդյունքի:
Արդյունքս եղավ այն, որ աշակերտների հավասար մասնակցություն ունեցա թիմերում:

Դասի ուժեղ կողմերը	Դասի թույլ կողմերը
Աշխատում էին բոլորը, աշակերտները կարողացան օբյեկտիվորեն գնահատել և՛ իրենց աշխատանքը, և՛ ընկերների:	Կար փոքր-ինչ աշխատանքային աղմուկ: Գնահատման անիվը բոլոր խմբերում անհամաչափ էր: Համագործակցելու կարողության ձևավոման գործում դեռ անելքիներ ունեմ:

Դաս 2-ի վերլուծություն

Ես և շրջակա աշխարհը

Այս դասին համագործակցային մեթոդը կիրառեցի իմաստի ընկալման փուլում: Կիրառեցի <<Մտածի՛ր, զույգ կազմիր, քննարկիր>> մեթոդը:
Այս դասին արդեն կարողացա ստանալ ավելի մեծ արդյունք: Աշակերտները կարողացան հետևել սահմանված կանոններին, եղան ավելի ուշադիր, կատարեցին քննարկումներ:

Դասի ուժեղ կողմերը	Դասի թույլ կողմերը
Աշակերտների մոտ նկատվում էր ստեղծագործական մտածողություն, լուռ աշխատելու և համագործակցելու հմտություն: Ձգտում էին իմանալ ավելին:	Հարցերին պատասխանում էին ոչ լիարժեք, անհրաժեշտ էր անընդհատ հարցերը պարզեցնել:

Մասնախմբերի ուսուցիչները ներկա էին դասին.

- Դասն անցավ աշակերտների ակտիվ մասնակցությամբ, դասը աշակերտակենտրոն էր:
  Դասի ընթացքում ուսուցիչը կարողացավ հասնել իր առջև դրված նպատակներին:
  Այն, ինչ սովորեցին այս դասին, աշակերտները երբեք չեն մոռանա:

Դասի 3- ի վերլուծություն

Մայրենի

Այս դասին համագործակցային մեթոդը կիրառեցի խթանման փուլում:
Կիրառեցի <<Խճանկար>> մեթոդը՝ նպատակ ունենալով ինքնուրույն աշխատելու, այնուհետև միասին քննարկելու և վերարտադրելու հմտությունները ձևավորելուն: Արդյունքս եղավ այն, որ կարողացա հասնել նպատակիս և համագործակցությունը աշակերտներիս մոտ խթան հանդիսացավ ուսման որակի բարձրացմանը:

Դասի ուժեղ կողմերը -

Աշակերտները կարողացան ստեղծագործաբար մոտենալ թեմային: Քննարկեցին հերոսների արարքները և կատարեցին ճիշտ վերլուծություն:

Դասի թույլ կողմերը -

Կար աշխատանքային աղմուկ, աշակերտները ցուցաբերում էին անհամբերություն, լրացում կատարելիս պատասխանում էին խմբով:
Դասին ներկա էր տնօրեն Գ. Գևորգյանը:

Ա. Ղարիբյան.

-Դասը հագեցած էր, հետաքրքիր, կիրառվեցին նորագույն մեթոդներ, որոնք օգնեցին ուսուցչին հասնելու նպատակին: Դասի պլանը և նպատակները համապատասխանում էին չափորոշիչներին: Աշակերտները համագործակցում էին, դասարանում տիրում էր հանդուրժողականության մթնոլորտ:

Եզրակացություն

Համագործակցելու ունակությունը ինքնին համարվում է 21-րդ դարի չորս կարողունակություններից մեկը: Աշակերտների մեջ որոնողական աշխատանքներ կատարելու, իրար հետ համագործակցելու և հանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու կարողությունները ձևավորելու գործում մեծ դեր ունի ուսուցիչը:

Ուսուցիչն իր կոչմանը կարող է արժանանալ միայն այն դեպքում, երբ նա հենվելով ընդունված բարոյահոգեբանական, մանկավարժական նորմերի վրա, իր կողմից ներդնում է մեծագույն ջանքեր, նոր միջոցներ (ՏՀՏ գործիքներ) և ճիշտ մեթոդներ՝ իր առջև դրած նպատակին հասնելու,դասապրոցեսն առավել ընդգրկուն և հետաքրքիր դարձնելու համար:

Հետազոտությանս արդյունքում եկա այն եզրակացության, որ ուսուցման գործնթացը կլինի առավել արդյունավետ, եթե հաշվի առնվի հետևյալ հանգամանքները.

- *Ավելի շատ ոգևորել նրանց, ովքեր իրենց ընկերների կողմից քիչ են ուշադրության արժանանում:*
- *Չճնշել, չսահմանափակել սովորողի երևակայությունը:*
- *Հասկացնել, որ սխալվելը ևս մարդկային է, և որ դրանք մեզ սովորելու հնարավորություն են տալիս:*
- *Հնարավորություն ստեղծել, որպեսզի բոլորը հավասար մասնակցություն ունենան:*
- *Խթանել հանդուրժողականությունը, ընդգծված հավանություն տալ այն աշակերտներին, ովքեր պատրաստակամ են օգնելու ընկերներին:*

Ի վերջո հետազոտական աշխատանքս ավարտել եմ այն համոզմամբ, որ արդի դարաշրջանում ոչ մի ինֆորմացիոն տեղեկատվություն չի կարող երեխային տալ բարոյական այն արժեքը, ինչը տալիս է ուսուցիչը, քանի որ միայն այս մատուցման մեջ է խորապես ներդրված այն սերը, որն ուղղված է անձի մտավոր զարգացմանը և անհատականությանը:

Եզրակացությունս լիարժեք չէ, քանի որ հետազոտական աշխատանքի համար շատ կարճ ժամանակ էր տրված:

Գրականության ցանկ

1. Ափոյան Ա. Է. Դասավանդման մեթոդիկա 2014 Համագործակցային ուսուցումը տարրական դասարաններում
2. Արնաուդյան Ա., Գյուլբուդաղյան Ա., Խաչատրյան Ս., Խրիմյան Ս., Պետրոսյան Մ., Մասնագիտական ուսուցման ձեռնարկ ուսուցիչների համար: Երևան: Կրթության ազգային ինսիտուտ հրատարակչություն 2004
3. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ
4. Հովհանիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ. Համագործակցային ուսուցում. Ձեռնարկ: Երևան: «Անտարես»: 2006
5. Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Արնաուդյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Օհանովա Ի., Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ. 2004, 336 էջ:
6. Պատմություն և Հասարակագիտություն.Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր (կրթակարգ, չափորոշիչներ, առարկայական ծրագրեր, ուսուցման նյութեր և նոր մեթոդներ) Երևան: Հրատարակչություն: 2007:
7. Պուրուկուրու Վեսա Համագործակցային ուսուցում. վերապատրաստողի ուղեցույց Երևան: «Անտարես»: 2006:
8. Սահակյան Վ.Ա. Դասավանդման մեթոդիկա 2020: Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան
9. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005: